Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-439[6]-24.11.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասն ««Ազգային անվտանգության մարմինների մասին»,» բառերից հետո լրացնել ««Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին»,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը «ազգային անվտանգության մարմիններում» բառերից հետո լրացնել «, պետական պահպանության ծառայությունում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) պետական պահպանության ծառայությունը:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասն «Ազգային անվտանգության մարմինները,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության ծառայությունը,» բառերով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն «ազգային անվտանգության մարմինների,» բառից հետո լրացնել «պետական պահպանության ծառայության,» բառերով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Պետական պահպանության ծառայությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդև 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:»:

Հոդված 7. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը «ոստիկանության» բառերից հետո լրացնել «, պետական պահպանության ծառայության» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը: